Որո՞նք են հասարակության մասնակցության հիմնական տեսակները

- *սիմվոլիկ մասնակցություն.* հասարակությունը մասնակցում է տարբեր պաշտոնական մարմինների ժողովներին ու քննարկումներին, բայց չունի դրանց որոշումների կայացման գործընթացի վրա ազդելու հնարավորություն,
- *պասիվ մասնակցություն.* սահմանափակվում է միայն որոշումների կամ կատարված իրադարձությունների մասին տեղեկատվության ստացմամբ, մասնակցություն հարցումների միջոցով, մասնակցությունը սահմանափակվում է խորհրդատվություններով կամ հարց ու պատասխանով: Մասնագետները որոշում են հիմնախնդիրն ու տեղեկատվության հավաքման գործընթացը և կատարում վերլուծություններ,
- *մասնակցություն հանուն նյութական շահագրգռվածության.* հասարակության մասնակցությունը կատարվում է ռեսուրսների տրամադրման ձևով, որի դիմաց մարդիկ ստանում են նյութական աջակցություն, օրինակ՝ սնունդ աշխատանքի դիմաց և այլն: Նրանք մասնակցում են, ներդնում են որոշակի ռեսուրսներ, բայց չեն ազդում որոշումների կայացման գործընթացի վրա: Երբ ավարտվում է նյութական աջակցությունը, մասնակցությունը դադարում է:
- *ֆունկցիոնալ մասնակցություն.* այս դեպքում մասնագետները նախապես որոշում են խնդիրները և հասարակությանը ներգրավում որոշ հարցերի քննարկման կամ համատեղ որոշումների կայացման գործընթացին,
- *ինտերակտիվ մասնակցություն.* մարդիկ մասնակցում են վերլուծությունների կատարման և գործողությունների պլանի մշակման գործընթացներին: Այս դեպքում քաղաքացիական մասնակցությունը ընկալվում է որպես անբաժանելի իրավունք և ոչ թե ծրագրի նպատակներին հասնելու միջոց,
- *անհատական մոբիլիզացիա.* այս դեպքում քաղաքացիները ինքնուրույն նախաձեռնում են գործնական քայլեր անկախ արտաքին ուժերից, կապեր են հաստատում այլ կազմակերպությունների հետ՝ խորհրդատվություն և նյութական միջոցներ ստանալու համար և ինքնուրույն են տնօրինում այդ միջոցները:

Հասարակության մասնակցության հիմնական ձևերն են.
- տեղական ֆորումը,
- տեղեկատվության ստացումը,
- մասնակցությունը հասարակական լսումներին, կլոր սեղաններին,
- հանրային քննարկումներին, սեմինարներին,
- վերլուծական հոդվածների, մասնագիտական կարծիքների հուշաթերթերի և տեղեկատու թերթիկների հրապարակումը,
- հասարակական մոնիթորինգը,
- աշխատանքը ՀԼՄ-ների հետ:

OSCE

ՄՕՍԱՆ

«Աջակցություն Օրհուսի Կոնվենցիայի իրականացմանը, Օրհուս կենտրոնների և բնապահպանական քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների ձևավորմանն ու ուժեղացմանը»

ԾՐԱԳԻՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԹԵՐԹԻԿ

«Ինչպե՞ս մասնակցել բնապահպանական որոշումների կայացման գործընթացին»

2014

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել՝
ՀՀ, ք. Երևան, Չարենց 46, հեռ 011 81 85 93
Կամ այցելել www.aarhus.am կայք

Որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցության իրավունքը

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն իր իշխանությունն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: ՀՀ-ի կողմից նաև 2010թ.-ին ստորագրվել է Տեղական ինքնակառավարման եվրոպական լրացուցիչ արձանագրությունը, որի համաձայն երկրները պետք է ապահովեն տեղական իշխանության գործերին յուրաքանչյուրի մասնակցության իրավունքը՝ իրենց իրավասությունների շրջանակում:

Որոշումների կայացման գործընթացում մասնակցությունը հանդիսանում է այն հիմնական գործոններից մեկը, որը նպաստում է հասարակության իրավասության շրջանակների ընդլայնմանը, մոտիվացիայի և համագործակցության զգացողության ձևավորմանը, փոխվստահության և հանգամանքների վրա ազդելու հնարավորության աճին: Քաղաքացիական մասնակցությունը հասարակական շահերի պաշտպանության գործընթացում կարևորագույն նախապայման է և կազմում է մարդու իրավունքների անբաժանելի մասը:

Հասարակական մասնակցությամբ հնարավորություն է ընձեռնվում ներգործել շրջակա միջավայրի վերաբերյալ կարևորություն ունեցող որոշումների ընդունման վրա՝ ստանալով տեղեկատվություն բնակչության առողջության և կենսամակարդակի վրա հնարավոր ազդեցություն ունեցող խնդիրների մասին: Դրանով հասարակական մասնակցությունը քաղաքացիների շրջանում ձևավորում է սոցիալական պատասխանատվության զգացում և ընդունված որոշումները համապատասխանում են տեղի առանձնահատկություններին:

Հասարակայնության ներգրավումը նախագծերի նախապատրաստման, մասնագիտական քննարկումների և իրագործման ժամանակ, նպաստում է պետական կառույցների նկատմամբ հավատի և հեղինակության աճին, պետական բնապահպանական կառույցների դիրքերի ամրապնդմանը:

Ինչ է հասարակության մասնակցությունը

Հասարակության մասնակցությունը մի գործընթաց է, որի շնորհիվ որոշակի խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելիս հաշվի են առնվում առանձին մարդկանց կամ բնակչության խմբերի հայացքները, դիրքորոշումը և կարծիքները:

Որո՞նք են հասարակության մասնակցության հիմնական սկզբունքները

- Հասարակությունը ներգրավվում է նախագծի քննարկման բոլոր փուլերում՝ մշակումից մինչև իրականացում, հատկապես նախնական փուլում, երբ առկա է որոշումների վրա ազդելու հնարավորությունը,
- մասնակցության համար սահմանվում են ողջամիտ ժամկետներ,
- հասարակայնությանը տրամադրվում է տեղեկատվություն մասնակցության հնարավորությունների մասին,
- որոշումների կայացման գործընթացում տրամադրվում են բազային տեղեկություններ իրականացվելիք նախագծի մասին և օգտագործվող ամբողջ տեղեկատվությունը մատչելի է ծանոթացման համար,
- ապահովվում է մեկնաբանությունների տրման հնարավորությունը,
- պետական մարմինների կողմից մշակված որոշումներում պատշաճ հաշվի են առնվում հասարակայնության կողմից արտահայտված կարծիքները,
- հասարակայնությանը տեղեկատվություն է տրամադրվում վերջնական որոշման մասին:

Ինչու՞ է պետք մասնակցել որոշումների կայացման գործընթացին

- բնակիչներն ավելի լավ տեղեկացված են լինում այն մասին, թե ինչ է տեղի ունենում իրենց շուրջը, ինչ կարևոր բնապահպանական նախագծեր են իրականացվում կամ նախատեսվում իրականացնել,
- կա մեծ հավանականություն, որ հասարակության տեսակետը ուշադրության կարժանանա և փոփոխություն կամ լրացում կմտցվի իրականացվելիք նախագծի մեջ,
- հասարակական մասնակցությունը կարող է նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի համար հնարավոր ռիսկերը և նվազեցնել նախատեսվող նախագծի բացասական ազդեցությունը,
- հասարակությունը գիտի, թե ով է որոշումներ կայացնում, ինչի հիման վրա են դրանք կայացվում, ինչքանով է հաշվի առնվում իրենց կարծիքը որոշումների կայացման գործընթացում,
- ընդհանուր առմամբ, հասարակության մասնակցությունը յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս իրեն զգալ հասարակության լիարժեք անդամ և զարգացնում է հասարակության հանդեպ ունեցած պատասխանատվության զգացումը:

Հասարակայնության մասնակցությունը հնարավորություն է տալիս.

- համապարփակ տեղեկատվություն ստանալ շրջակա միջավայրի վրա այս կամ այն նախագծի ազդեցության մասին,
- հաշվի առնել տեղական պայմանների առանձնահատկությունները և որոշել նախագծի հնարավոր թերությունները,
- հաշվի առնել տեղի բնակչության կարծիքը և լրացուցիչ անգամ կատարելագործել նախագիծը,
- լավացնել հարաբերությունները պետական, հասարակական և գործարար կա-ույցների միջև,
- նվազեցնել բախումների կամ անցանկալի գործողությունների հավանականությունը,
- հուսալի հարաբերություններ ձևավորել տեղական իշխանությունների, գործարարների, հասարակության և ՀԼՄ-ների միջև,
- Հասարակության մասնակցության շնորհիվ շահերի պաշտպանությունը ձեռք է բերում ձև և իմաստ: